

«Աջակցություն ուսմանը՝ ապագայի ներդրում» ծրագիր

Նախքան դիմումը լրացնելը ուշադիր կարդացեք

Ծրագրի ընդհանուր նկարագիր

«ԱՄՔՈՐ Հայաստան» բարեգործական հիմնադրամն իրականացնում է «Աջակցություն ուսմանը՝ ապագայի ներդրում» ծրագիրը: Ծրագրին կարող են մասնակցել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Սոցիոլոգիայի, Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետների բակալավրիատի 4-րդ կուրսի (առկա) գերազանց/բարձր առաջադիմություն ունեցող ՀՀ մարզերի այն ուսանողները, ովքեր ցանկանում են կրթությունը շարունակել ԵՊՀ նույն ֆակուլտետների մագիստրատուրայում:

Ծրագիրը գործելու է մրցութային կարգով: Մրցույթն անցկացվելու է **երկու փուլով**:

- **Առաջին փուլի** ընտրությունը կկատարվի ներկայացված փաստաթղթերի հիման վրա՝ ներքոնշյալ չափանիշներով.

Դիմողը՝

- ✓ Սոցիալական աջակցության վարչության «Փարոս» ծրագրի անդամ է
 - ✓ միակողմանի և/կամ երկկողմանի ծնողագուրկ է
 - ✓ մնացել է առանց ծնողական խնամքի
 - ✓ ծնողը(ները) 1-ին և/կամ 2-րդ խմբի հաշմանդամներ են
 - ✓ ունի հաշմանդամություն
 - ✓ ազատամարտիկի երեխա է
 - ✓ բազմազավակ ընտանիքից է (3 և ավել երեխա)
 - ✓ ընտանիքում կա վճարովի համակարգում սովորող երկու և ավելի ուսանող
 - ✓ բնակվում է ՀՀ մարզում
- **Երկրորդ փուլի** մասնակցության համար ընտրված 20 ուսանողները պետք է ներկայացնեն ծրագիր՝ «Ինչպես եմ պատկերացնում իմ համայնքի զարգացումը», որի համար կանցնեն համապատասխան դասընթացներ: Ներկայացված ծրագրերը քննարկվելու են ծրագրի շրջանակում կազմված հանձնաժողովի կողմից և կատարվելու է հաղթողների ընտրություն (յուրաքանչյուր ֆակուլտետից 4 ուսանող):

Լրացված դիմումը, էսսեն և կցված փաստաթղթերը անհրաժեշտ է ներկայացնել

ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոն՝

ԵՊՀ կենտրոնական մասնաշենք

6-րդ հարկ, 604 սենյակ

Հեռ.՝ (+374 60) 71-01-80

Էլ. հասցե՝ acc@ysu.am

Ուշադրություն.

- Մրցույթին մասնակցելու համար կոիտարկվեն միայն լիարժեք փաթեթները:
- Նշված ժամկետից ուշ ներկայացված փաթեթները չեն դիտարկվի:
- Մասնակիցների ընտրման գործընթացը թափանցիկ և անաչառ անցկացնելու համար ստուգվելու է դիմումին կից ներկայացված տեղեկությունների և փաստաթղթերի ճշգրտությունը:

Հարցերի դեպքում կարող եք դիմել ծրագրի համակարգողներին՝

- ✓ Արմինե Հաջաթյան (ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոն, հեռ.՝ (060) 710180)
- ✓ Մարինե Եղիազարյան/ Աննա Կարապետյան (ԱՄՔՈՐ Հայաստան, հեռ.՝ (010) 248141, (010) 282977)

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2018 թվականի մարտի 2-ը: